



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

« 10 » 07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0120-23

Ձեռնարկողը՝

«Ավագ» ՍՊԸ

Մեղրի, Ավանք փ. 1, փ. 4

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Մալևի մոնցողիորիպների
հանքավայրի օգտակար հանածոյի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեքվություն
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0120-23

< 10 > հունիսի 2023թ.

Սյունիքի մարզի Մալի մոնցողիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Ավագ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզ, Մեղրի համայնք
Ալվանք բնակավայր


Ներածական մաս. Մալի մոնցողիորիտների հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրի տարածաշրջանի Ալվանք գյուղից 1.0-1.5 կմ հարավ-արևմուտք, Մեղրի քաղաքից 9 կմ արևելք: Մոտակա բնակավայրերն են՝ Մեղրի, Ագարակը քաղաքները և Ալվանք, Շվանիձոր բնակավայրերը:

Ընդերքօգտագործման նպատակով հայցվող տարածքը հաշվառված է որպես համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սյունիքի մարզի Մալի մոնցողիորիտների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակազմի Օգտակար հանածոների պաշարների գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ի N105 որոշման հիման վրա: Հաստատված պաշարների քանակը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ C1 կարգով, կազմում են 848.8 հազ.մ³:

Իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են. որպես երեսապատման «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-98 ԳՈՍՍ-ի քարի արդյունահանման հումք և առաջարկվել է.



-Շահագործման առաջին տարվա ընթացքում արտադրական թափոնների պահպանումը և դրանց գնահատումը շինարարական խճի և ավազի արտադրության համար:
Բացահանքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով կկազմեն՝

1. X=4310996	Y=8616433
2. X=4311084	Y=8616368
3. X=4311134	Y=8616365
4. X=4311169	Y=8616338.
5. X=4311213	Y=8616327
6. X=4311220	Y=8616346
7. X=4311195	Y=8616385
8. X=4311225	Y=8616411
9. X=4311272	Y=8616466
10. X=4311292	Y=8616504.
11. X=4311226	Y=8616560
12. X=4311137	Y=8616457
13. X=4311120	Y=8616488
14. X=4311095	Y=8616510
15. X=4311050	Y=8616519
16. X=4311017	Y=8616482

S=3.42 հա

Սույն նախագծով նախատեսվում է.

հանքավայրը մշակել բաց եղանակով, տարեկան 42440մ³ արտադրողականությամբ /մարվող պաշար/:


Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է հորատասեպային եղանակով:
Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 304մ,
- ամենամեծ լայնությունը – 159մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 64.0մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 848.8հազ.մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ - 787.5հազ.մ³,
- բացահանքի օտարման մակերեսը, - 3.42հա,
- մակաբացման ապարների քանակը – 0,
- բացահանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբերի.

-Կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում՝ թողնվում են բացահանքի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար (61300մ³ կամ 7.22%):

- Շահագործողական կորուստներ՝ որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ, չեն դիտարկվում, քանի որ մակաբացման ապարները բացահանքում բացակայում են:



Օգտակար հանածոն ավտոինքնաթափերով տեղափոխման ժամանակ կորուստները չնչին են և դրանք չեն հաշվառվել:

Ընդամենը կորուստները կկազմեն՝ 61300մ³ կամ 7.22%:

Բացահանքի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր:

Հանքավայրի բացումը կատարվում է նրա հյուսիսարևմտյան մասի 602.5մ բարձրության նիշից: Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավարևմտյան մասով անցնող դեպի Ալվանք գնացող ավտոճանապարհի 526.0մ բարձրության նիշից դեպի 602.5մ բարձրության հորիզոն: Մուտքային ավտոճանապարհի երկարությունն է՝ 745մ, լայնությունը 6մ, որի ամենամեծ թեքությունն է՝ 119.05%: Հորիզոնները վերևից մշակվելուց հետո՝ ավտոճանապարհին աստիճանաբար կտրտվելով կիցնի մինչև 540.0մ բարձրության հորիզոնը:

Հողային աշխատանքների ծավալն է՝ 1750մ³:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

- հանքաստիճանի բարձրությունը – 2.5մ,
- անվտանգության բերմայի լայնությունը – 1.0մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90°
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20մ:

Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումն իրականացվում է հիմնականում հորատասեպային եղանակով և բաղկացած է հետևյալ գործողություններից՝


- միաքարի անջատում զանգվածից,
- միաքարի հեռացում (քարշ տալը) հանքախորշից դեպի մշակման վայրը,
- միաքարի մասնատում բլոկների (մեծ աղյուսների),
- բլոկների կոպիտ մշակում (շտկամշակում),
- շտկամշակված բլոկների բարձում տրանսպորտային միջոցների մեջ:

Միաքարի անջատումը զանգվածից նախատեսված է կատարել հորատասեպային աշխատանքներով (ուղղաձիգ ուղղությամբ միաքարի անջատում): Հորատասեպային աշխատանքների կիրառման ժամանակ նախատեսվում է սեպերի տեղադրում սեպանցքերի մեջ, հիդրավլիկ ճնշմամբ առաջացնելով զանգվածի ճեղքում: Սեպանցքերի խորությունը ընդունվում է միաքարի 100մ-ից մեծ բարձրության դեպքում միաքարի բարձրության չափ: Սեպանցքերը հորատվում են ՈՒՄ-50ԲԵ մակնիշի հորատման մուրճերով:

Մենաքարի ճեղքումը բլոկների (մեծ աղյուսների)՝ նախատեսվում է կատարել էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Արդյունահանվելու է 787.5հազ.մ³ օգտակար հանածո: Հիդրավլիկ մուրճով էքսկավատորի հերթափոխային միջին արտադրողականությունը պինդ ապարներում ըստ տեղեկատու տվյալների կազմում է 180մ³/հերթ կամ 46.8հազ.մ³/տարի:

Բլոկների կոպիտ մշակումը նրանց համապատասխան ձև տալու (շտկամշակելու) համար նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով ՕՄ-7 մակնիշի հարվածապոկիչ մուրճերի միջոցով: 1մ³ բլոկի համար միջին հաշվով պահանջվում է 1.3մ² մակերես:

Բացահանքում սեղմած օդի սպառիչներն են ՈՒՄ-50ԲԵ հորատման մուրճերն ու ՕՄ-7 հարվածապոկիչ մուրճերը:



Քարհանքի սեղմած օդի սպառիչներին սեղմած օդով ապահովելու համար նախատեսվում է ՈՐ-10 10մ³/րոպե արտադրողականությանը 4 հատ շարժական կոմպրեսորային կայանք:

Բլոկների բարձումը ավտոինքնաթափի մեջ, ինչպես նաև նրանց բեռնաթափումը մշակման արտադրամասում կատարվում է 16տ բեռնամբարձությամբ KS-3562B ավտոկռունկի միջոցով: Ավտոկռունկի հերթափոխային արտադրողականությունն ըստ ՆՏՆ-ի միջին հաշվով կազմում է՝ բլոկների բարձման ժամանակ 83.6մ³/հերթ:

Արտադրական թափոնները սկզբում կտեղափոխվեն բացահանքի 580մ բարձրության հորիզոնականի երկայնքով թեքության վրա N1 լցակույտ, որի համար նախատեսվում է ավտաճանապարհ: Այնուհետև հետագա արտադրական թափոնները ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի մուտքային ավտոճանապարհի սկզբնամասից հաշված՝ 169մ-ից-313մ հատվածի երկայնքով և կլցվեն ձևավորելով N2 լցակույտ լցակույտ: Մինչ շահագործման առաջին տարվա ավարտը կկատարվեն արտադրական թափոնների համապատասխան լաբորատոր հետազոտություն դրանց գնահատումը շինարարական խճի և ավազի արտադրության համար, որից հետո կտեղափոխվեն մինչև 0.5կմ միջին հեռավորության վրա նախատեսվող ՋՏԿ հետագա մերամշակման: Տեղափոխումը կկատարվի 20.0տ բեռնատարողությամբ SHACMAN SX3258DR384 մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով (թափքի տարողությունը 6.0մ³):

Մակաբացման ապարները և փուշտաշերտը բացահայտում բացակայում է: Շահագործման 1-ին տարվա ընթացքում առաջացած արտադրական թափոնների քանակն է 18900մ³:


Մինչև շահագործման 1-ին տարվա ավարտն առաջացած արտադրական թափոնները՝ 9450մ³ ծավալով, ինքնաթափով կտեղափոխվեն 580մ բարձրության հորիզոնի վրա, կլցվեն միջինը 6.3մ բարձրությամբ՝ կձևավորվի N1 լցակույտ: Մնացած արտադրական թափոնների 9450մ³ ծավալով կբարձվեն ավտոինքնաթափ և կտեղափոխվեն մուտքային ավտոճանապարհի սկզբնամասից հաշված 169մ-ից -313մ հատվածի երկայնքով (մինչև 1-ին ոլորանը) և կլցվեն ստեղծելով N2 լցակույտ նախագծվող բացահանքի ներսում՝ ներքին լցակույտի տեսքով: Իսկ հետագա հաջորդ տարիների շահագործման ընթացքում արտադրական թափոնները, որպես խճի և ավազի հումք գնահատելուց հետո կտեղափոխվեն նախատեսվող ջարդող տեսակավորող կայան՝ 0.5կմ հեռավորությամբ: Շահագործման ավարտից հետո իրականացվում է խախտված հողերի վերականգնում:

N1 և N2 լցակայանների միջին բարձրությունն են համապատասխանաբար 6.3մ և 6.5մ, որոնց թեքության $a=350$ -ի դեպքում՝ զբաղեցրած մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ վերին մասերում՝ 1110մ² և 970մ², ստորին մասերում՝ 2200մ² և 2000մ²: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակայանաջացման ժամանակ:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է հորատման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Զուրը բերվում է ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ՍԽ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ արդյունահանման կազմում է 39375մ³:



Ընդերքօգտագործման թափոններ չեն գոյանում, քանի որ հանքավայրում բացակայում են մակաբացման ապարները:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները (մետաղաջարդոնները) և կենցաղային աղբը:

Բացահանքերում բոլոր լեռնային աշխատանքները պետք է կատարվեն բաց եղանակով մշակվող հանքերի գործող անվտանգության միասնական կանոններին /ԱՄԿ/ և հանքավայրերի շահագործման տեխնիկական նորմերին /ՇՏԿ/ խստով համապատասխան: Տնտեսական վնասը օդային ավազանի աղտոտումից կկազմի՝ $Y = 51.3$ հազ.դրամ:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո: Շահագործման ավարտից հետո կիրականացվի խախտված հողերի վերականգնում: 540.0մ բարձրության հանքաստիճանը 2.27հա մակերեսով կհարթեցվի: Հարթեցումը կկատարվի $D3 - 170.1$ բուլդոզերի օգնությամբ: Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 2.27հա, ինչպես նաև արտադրական հրապարակը 220մ², ավտոճանապարհները՝ 790մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 2.374հա: Ընդամենը լեռնատեխնիկական վերականգնման համար նախատեսվում է 591.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

Պատմության և մշակույթի հուշարձանների և Մալևի հանքավայրի միջև ամենամոտ հեռավորությունը տատանվում է 1.2-ից 1.5կմ սահմաններում: Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:
- Տեխնիկատրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ):
- Բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով իրականացնել կանաչապատում թփուտներով՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման դրույթներով:
- Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:
- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է



համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար:

- Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Կեղտաջրերի հավաքում հորատիս զուգարանում, որը հետագայում կդատարկվի հատուկ ծառայության ուժերով:

- Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդի աղտոտման վերահսկման պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:


- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

- Վայրի բնության, կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

- Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ ամսական մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:


Փորձաքննական պահանջներ



- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Անհրաժեշտ է «Շահագործման առաջին տարվա ընթացքում արտադրական թափոնների պահպանումը և դրանց գնահատումը շինարարական խճի և ավազի արտադրության համար» գնահատումից հետո ներկայացնել թափոնների վերամշակման պլան և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման համար Կառավարության 17.08.2017թ. N990-Ն որոշման պահանջներին համապատասխանող ֆինանսական երաշխիքը,

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ավագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մալի մոնցոդիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ  Գովիկ Մեսրոպյան

